Արձանագրություն N 2
ՋԿ-ԳՀԾՁԲ-22/6-Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 23 սեպտեմբերի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի անդամներ Գ. Մելիքսեթյանը, Ա. Մխիթարյանը, Կ. Սարգսյանը, Ա. Սիմոնյանը և Ս. Ալեքսանյանը:
Քարտուղար՝ Ս. Գալստյանը:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Տավուշի մարզի Տավուշի ջրամբարի պատվարի վերականգնման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԾՁԲ-22/6-Ն ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2022 թվականի սեպտեմբերի 15-ին, ժամը 16:00-ին:

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/6-Ն ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	էլեկտրոնային հասցե
«Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ	ք. Երևան, Մոսկովյան 33/1 091 54 84 97	info@armhydroproject.am

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 նախահաշվային արժեք – 28 301 900 ՀՀ դրամ ՀՀ Տավուշի մարզի Տավուշի ջրամբարի պատվարի վերականգնման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ				
1	«Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ	20 820 000	4 164 000	24 984 000

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/6-Ն ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը մասնակից «Հայիիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի հայտով ներկայացվել են:

Մասնակիցը ներկայացրել է հայտի ապահովում կանխիկ փողի ձևով՝ 1 420 000 ՀՀ դրամի չափով:

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված յուրաքանչյուր հայտի փաստաթղթերի համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/6-Ն ծածկագրով ընթացակարգի «Հայիիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակցի կողմից ներկայացված Լիազորագրի, Դիմում-Հայտարարության (Հավելված 1), Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի (Հավելված 1.2) ֆայլի և նմանատիպ պայմանագրերի ֆայլի էլեկտրոնային ստորագրությունները անվավեր են:

Համաձայն ՋԿ-ԳՀԾՁԲ-22/6-Ն ծածկագրով հրավերի 8.9 կետի, գնահատող հանձնաժողովը 20.09.2022 թվականին մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, «Հայիիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը (22.09.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունը, որի վերաբերյալ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով տեղեկացրել է մասնակցին:

Սահմանված ժամկետում «Հայիիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ն շտկել է անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/6-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակից «Հայիիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև ՋԿ-ԳՀԾՁԲ-22/6-Ն ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 կետը (ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից)՝ հանձնաժողովը ընթացակարգի մասնակից «Հայիիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ին հրավիրում է գնի նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա **28.09.2022 թվականին ժամը 11:00-ին**, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ):

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

անդամներ _____ Գ. Մելիքսեթյան

_____ Ա. Մխիթարյան

_____ Կ. Սարգսյան

_____ Ա. Սիմոնյան

_____ Ս. Ալեքսանյան

Քարտուղար _____ Ս. Գալստյան